



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ լ յ տ է ս ա կ ա ն ե շ Բ լ յ ա կ ա ն

ԳՐԱԳԻՐ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻԻ 24.

1854

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Որդիական սեր :

ՄԵԾԱՐԵՑԻՔ ԶԵՐ ԾՆՈՂՔԸ .
աստուածներէն որը կամ որ խելացի
մարդ այս պարտքէն զձեզ կրնայ ազատ
լնել :

Հայր մը , մայր մը , պապ մը՝ որուն
ծերութիւնը որդին կը սնուցանէ , իրեն
համար երջանկութեան գանձ մը պիտի
ըլլան , շատ աւելի հարուստ ու մեծա-
յարգ՝ քան զբոլոր աստուածոց պատկեր-
ները . բաւական է որ զիտնայ ճանչ-
նալ այն գանձուն պատուականութիւ-

նը , որուն որ ինքը երաշխաւոր է եղած
ու աւանդապահ :

Իայց այդ անգին գանձուն արժանի
ըլլալու համար ուրեմն ինչ պէտք է ը-
նել . — Ստեղծող բերէք պատմութե-
ահաւոր օրինակները : Երկրորդ , իր որ
գիշերէն անարգուած՝ երկնից անէծքը
վրանին կը մաղթէ . կը լսեն երկինք
իր հայրական ձայնը , ու կը կատարեն
ալ . բոլոր բանաստեղծները միաբան կը
պատմեն երկնից այս ահաւոր վրէժխն-

դրուծիւնը : Փիւնիկիոս՝ իր Լ'մինդոր
հօրմէն անէծք կ'առնէ . Իպպոլիտոս՝
Թեւէոսէ . այս՝ և ասոնց նման հազար
ու մէկ պատմութիւններ միշտ կը վկայ-
են թէ Լ'ստուած ծնողաց անէծքին
կը լսէ : Լ'դարուծիւնը կը պահանջէ՝
որ որդւոց ահաւորագոյն թշնամին ի-
րենց վշտացուցած ու բարկացուցած
հայրն ըլլայ :

Իայց չկարծէք թէ Լ'ստուած, որ
այսպէս միշտ պատրաստ է ծնողաց իղ-
ձը լեցընելու, հօր մը՝ մօր մը միայն
տրտմութեանցն ու ցաւոց ատեն օգնա-
կան եղած ըլլայ : Երբ որդի մը զիրենք
կը պատուէ ու սրտերնին ուրախու-
թեամբ կը լեցընէ, երբ անոնք անհամ-
բերութեամբ սրտի անդադար ու մշտա-
մուռնչ աղօթքներով կ'աղաչեն՝ որ եր-
կինք ձեր վրայ թափեն երջանկութեան
հոսանքները, ինչ . միթէ այն ատենն
ալ երկինք իրենց չըլտեր, ինչպէս իրենց
բարկութեան ատեն լսեց, ու միթէ փա-
փագներնուն լըումը պիտի չկատարէ :
Ուրեմն Լ'ստուած արդար մատակարա-
րութիւն չընէր բարեաց . այսպէս գէշ
կը ճանչնանք եղեր ուրեմն աստուա-
ծային Լ'ախախնամութիւնը :

Եւ, չէ . չկայ այնպիսի յիշատակա-
րան մը, որուն վրայ այնչափ ախորժի
Լ'ստուած նայելու՝ ինչպէս ծերունի
հայր մը, պատկառելի պապ մը, ու տա-
րիներուն տակ ընկճած մայր մը : Լ'յն
մեծարանքը, որով որ որդի մը իր խո-
նարհ ու փափուկ զգացմունքը անոնց
կը յայտնէ՝ Լ'ախախնամութեան առ-
ջին պատարագի մը պէս հաճոյական
է Լ'սոր համար երբէք չենք կրնար
գտնել խելացի մարդ մը՝ որ չվախնայ
չմեծարէ զանոնք, որ իրեն կեանք տուած
են, ու չճանչնայ անոնց աղօթիցը ոյժն
ու անգին պատուականութիւնը : Լ'յն
պիտիւն բնութեան ուղածին համեմատ
կը մտածէ . կը մտածէ, որ իր բաղդին
բան մը չպակսիր՝ թէ որ իր կարօտեալ
ծնողացն իրեն ձեռացը վաստակէն ազ-
նիւ մասը հանելու ըլլայ նէ . և երբ կը
տեսնէ ինքը զինքը անոնցմէ զրկուած՝
երիտասարդ հասակի մէջ զիրենք կոր-

սընցընելով, երկար ժամանակ անմխի-
թար սգով զիրենք կ'ողբայ : Ի՞նչ ան-
օրէնն է՝ որ իր ծնողաց առջեւ դողդը-
ղալու բռնադատուած է :

Ո՛վ պատանիք, ո՛վ ժողովուրդք, ձե-
զի կ'ըսեմ . հաւտացէք ինծի ,

ՄԵԾԱՐԵՑԻՔ ԶԵՐ ԾԱՌԱՔԸ

ՊԼԱՏՈՆ

Ո՛վ որ իր հայրը կը պատուէ՝ իր մեղքերուն թա-
ղութիւնը կ'առնու . և ո՛վ որ զմայրը կը մեծարէ,
այնպէս է՝ իբրեւ թէ արդէն մեծ գանձ մը գտած
ըլլար :

Ո՛վ որ իր հայրը կը պատուէ՝ վերջէն ինքն ալ
իր որդիքներէն պիտի մեծարուի . ու ինչ աղօթք
որ ընէ՝ Լ'ստուած պիտի լսէ :

Գործքով ու խօսքով նայէ որ քու հայրդ պա-
տուես . որպէս զի իրեն օրհնութիւնը քու վրադ
իջնայ :

Որդեակ, քու հօրդ ծերութեանը օգնական
ըլլա . չըլլայ թէ զինքը իրեն կենացը մէջ տրտմե-
ցընես :

Իր հօրն ողորմութիւն ընողը՝ Լ'ստուած ոյ գիմաց
չմոռցուիր :

Լ'ստուած ոյ գէմ հայհոյութիւն ընողի մը պէս է
իր հայրն անարգողը . Լ'ստուած ոյ անէծքը կը հաս-
նի անոր վրայ, որ իր մայրը կը բարկացընէ :

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՅԵՍՈՒՍԵ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ն

Բ .

Յիշեցի զառարսն զառայինս .

ՍԱՂՄ .

Ընդ ծալ ի ծալ խորշում ամաց զիմակին
Յակօսիցն ի ստուեր՝

Ժրպիտ թեթեւ սողոսկեցաւ լուսածին
Զերդ չող ի գիշեր :

Եւ ի մըռայլ սըրտիս հովիտ երերուն
Քերելով հեզիկ

Քաղցրահամբոյր սրացաւ թեւօք զըլարթուն
Ո՛հ, ինձ ծանօթ սիգ ,

Զի յիշեցի զաւուրսն առաջին :

Յիշեցի զաւուրսն առաջին ,

Յիշեցի զծաղիկն ի ծաղիկն .

Յիշեցի ըզբոյր Եղեմին ,

Զողեմառ ըզխունկ զայն սըրտին .